

Կ-105-31.07.2017,04.12.2017-ՊԻՄԻ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՆՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

**ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հասկացություններն են՝

1) հանրագիր՝ Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն կամ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում կամ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական եւ հասարակական կյանքի այլ ոլորտներին վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն.

2) անհատական հանրագիր՝ հանրագիր, որը ներկայացվել է մեկ անձի կողմից.

3) կոլեկտիվ հանրագիր՝ հանրագիր, որը ներկայացվել է երկու եւ ավելի անձանց կողմից միեւնույն հարցով.

4) կրկնակի հանրագիր՝ հանրագիր, որը կրկին ներկայացվել է միեւնույն անձի կողմից միեւնույն հարցով եւ հիմնավորմամբ միեւնույն մարմնին կամ պաշտոնատար անձին, որի վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով տրվել է պատասխան.

5) էլեկտրոնային եղանակով ներկայացվող հանրագիր՝ «էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ներկայացված հանրագիր.

6) հրապարակային հանրագիր՝ էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձեւով ներկայացվող հանրագիր:

Հոդված 2. Հանրագիր ներկայացնելու սահմանափակումները

1. Հանրագրով անձը չի կարող պահանջել այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության դեմ կամ սահմանադրական կարգի բռնի տապալմանը կամ տարածքային ամբողջականության

բռնի փոփոխությանը կամ ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն կամ այլ խտրական վերաբերմունք հարուցելուն, բռնություն կամ պատերազմ քարոզելուն, այլ անձանց հիմնական իրավունքների եւ ազատությունների խախտմանը կամ մարդու արժանապատվության նսեմացմանը:

Հոդված 3. Հանրագիր ներկայացրած անձի իրավունքները

1. Հանրագիր ներկայացրած անձն իրավունք ունի՝

1) հանրագրի հետ ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր եւ տեղեկություններ.

2) միանալ կոլեկտիվ հանրագրին.

3) ցանկացած ժամանակ հետ վերցնել իր ներկայացրած հանրագիրը կամ հրաժարվել կոլեկտիվ հանրագրից.

4) ստանալ պատշաճ պատասխան հանրագրի վերաբերյալ.

5) բողոքարկել սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված որոշումները.

6) իրականացնել սույն օրենքով սահմանված այլ իրավունքներ:

2. Հանրագիր ներկայացնելու եւ դրան պատասխան տալու համար պետական տուրք կամ այլ վճար չի գանձվում:

Հոդված 4. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք լիազորված են՝

1) հանրագիրը վերադարձնելու կամ հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում դրա մասին ծանուցել հանրագիր ներկայացրած անձին.

2) էլեկտրոնային եղանակով հրապարակել կոլեկտիվ հանրագիրը.

3) հանրագրում նշված առաջարկությանը հավանություն տալու դեպքում միջոցներ ձեռնարկել դրա կատարման ուղղությամբ.

4) հանրագիր ներկայացնող անձին պարզաբանել հանրագիրը վերադարձնելու կամ հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշումների բողոքարկման կարգը.

5) սույն օրենքով նախատեսված կարգով եւ ժամկետում պատշաճ պատասխանել հանրագիր ներկայացրած անձին:

2. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավունք ունեն անհրաժեշտության դեպքում հանրագրի քննարկումներին ներգրավել մասնագետների:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք ապահովում են հանրագրի լիարժեք, բազմակողմանի եւ օբյեկտիվ քննարկումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 5. Հանրագրի ներկայացման կարգը

1. Հանրագիր ներկայացնելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք:
2. Մինչեւ տասնչորս տարեկան անչափահասները հանրագիրը ներկայացնում են օրինական ներկայացուցչի միջոցով:
3. Հանրագիրը ներկայացվում է գրավոր՝ թղթային (առձեռն կամ փոստով) կամ էլեկտրոնային եղանակով:
4. Հանրագիրը ներկայացվում է հայերեն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
5. Եթե անհատական ընդունելության ժամանակ անձի հնչեցրած առաջարկությունը բովանդակում է սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները, եւ անձը ստորագրում է ընդունելության ժամանակ կազմված արձանագրությունը, ապա այդ արձանագրությունը դիտարկվում է որպես հանրագիր եւ քննվում սույն օրենքով սահմանված կարգով:
6. Հանրագիրը կարող է ներկայացվել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով:
7. Հանրագիրը ներկայացվում է այն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, որոնց իրավասություններին վերաբերում են հանրագրով առաջադրված հարցերը:
8. Սահմանադրության 7-րդ գլխով նախատեսված դատական իշխանության մարմիններին հանրագրեր ներկայացվում են նրանց գործունեության կազմակերպման հարցերով, որոնց վերաբերյալ պատասխան ներկայացնելու իրավունք ունեն նաեւ դատական իշխանության մարմինների աշխատակազմերը:
9. Տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված հանրագրերը վերադարձնելու, ինչպես նաեւ հանրագրի քննարկումը մերժելու հետ կապված հարցերը որոշում է համայնքի աշխատակազմը:
10. Հանրագիրը ենթակա չէ քննարկման, եթե հանրագիր ներկայացրած անձը դիմում է ներկայացրել այն հետ վերցնելու վերաբերյալ:
11. Կոլեկտիվ հանրագիրը ենթակա չէ քննարկման, եթե ներկայացվել է կոլեկտիվ հանրագրից հրաժարվելու վերաբերյալ դիմում՝ կոլեկտիվ հանրագրի բոլոր մասնակիցների համաձայնությամբ: Եթե կոլեկտիվ հանրագիր ներկայացրած անձինք,

բացառությամբ մեկի, հրաժարվել են կոլեկտիվ հանրագրից, ապա այն դադարում է համարվել կոլեկտիվ եւ ենթակա է քննարկման որպես անհատական հանրագիր:

12. Անկախ հանրագիրը հետ վերցնելու կամ կոլեկտիվ հանրագրից հրաժարվելու մասին դիմումից՝ հանրագիրը ենթակա է քննարկման, եթե հանրագրի քննարկումն էական նշանակություն ունի հանրային շահերի պաշտպանության տեսանկյունից:

13. Հանրագիրը հետ վերցնելու կամ կոլեկտիվ հանրագրից հրաժարվելու մասին դիմումը ներկայացվում է գրավոր:

Հոդված 6. Հանրագրի բովանդակությունը

1. Հանրագիրը պետք է բովանդակի հետեւյալ տեղեկությունները՝

1) «Հանրագիր» վերտառությունը.

2) ֆիզիկական անձի դեպքում՝ հանրագիրը ներկայացնող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

3) իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, մշտապես գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

4) կոլեկտիվ հանրագրի դեպքում՝ նաեւ հանրագիր ներկայացրած այն պատասխանատու անձը, ով լիազորված է հանդես գալ հանրագիրը ներկայացնողների անունից.

5) հանրագիրը ներկայացուցչի միջոցով ներկայացվելու դեպքում՝ նրա անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման կամ գործունեության վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

6) այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը կամ պաշտոնատար անձի անունը, որին ուղղված է հանրագիրը.

7) հանրագիր ներկայացնող անձի առաջարկը, ինչպես նաև հիմնավորումը՝ ցանկության դեպքում:

2. Հանրագիրը ստորագրում է այն ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը: Իրավաբանական անձի կողմից ներկայացված հանրագիրը ստորագրում է կանոնադրությամբ իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձը կամ իրավաբանական անձի կողմից օրենքով սահմանված կարգով լիազորված անձը:

3. Կոլեկտիվ հանրագիրը ստորագրվում է հանրագրին միացած բոլոր անձանց կողմից:

4. Եթե հանրագիրը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա հանրագրին կցվում է ներկայացուցչի լիազորագիրը:

5. Հանրագրին կարող են կցվել ներկայացված առաջարկը հիմնավորող փաստաթղթեր եւ այլ նյութեր:

6. Եթե որպես հանրագիր ներկայացված գրությունը, հաղորդունը կամ առաջարկությունը պարունակում է վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող դիմում կամ բողոք, ապա վարչական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, որին հասցեագրված է հանրագիրը, վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող դիմումը կամ բողոքն առանձնացնում եւ ընթացք է տալիս օրենքով սամանված կարգով:

Հոդված 7. Հանրագրի գրանցումը եւ հրապարակումը

1. Հանրագիրը ստանալու օրը այն ենթակա է գրանցման այդ նպատակի համար նախատեսված գրանցամատյանում: Գրանցամատյանում նշվում է հանրագրի ներկայացման ամսաթիվը, հանրագիր ներկայացրած անձի անունը, կոլեկտիվ հանրագրի դեպքում՝ որպես պատասխանատու նշված անձի անունը:

2. Անանուն հանրագիրը, ինչպես նաեւ այն հանրագիրը, որում նշված չէ հետադարձ կապի վերաբերյալ որեւէ տեղեկություն, ենթակա չէ գրանցման եւ քննարկման:

3. Կոլեկտիվ հանրագիրը ոչ ուշ, քան ստանալուն հաջորդող երկու օրվա ընթացքում ենթակա է հրապարակման այդ նպատակով ստեղծված համացանցում հասանելի տիրույթում, եթե կոլեկտիվ հանրագրի բոլոր մասնակիցները ներկայացրել են այն հրապարակելու վերաբերյալ իրենց համաձայնությունը:

Հոդված 8. Հանրագիրը վերադարձնելը

1. Եթե հանրագիրը չի համապատասխանում սույն օրենքի 6-րդ հոդվածով հանրագրի բովանդակությանը ներկայացվող պահանջներին, հանրագիր ներկայացրած անձը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահվում դրանք շտկելու անհրաժեշտության մասին: Նշված ժամկետում հանրագիրը սահմանված պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում հանրագիրը ենթակա է վերադարձման:

2. Եթե հանրագիրը կամ դրա մի մասը չի վերաբերում այն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասություններին, որոնց հասցեագրվել է, ապա ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանրագիրը ամբողջությամբ կամ մասամբ վերադարձվում է հանրագիրը ներկայացրած անձին՝ պարզաբանելով, թե որ մարմինն է իրավասու տվյալ հարցով:

3. Եթե անհատական ընդունելության արդյունքում ներկայացված բանավոր առաջարկն ամբողջությամբ կամ մասամբ չի վերաբերում տվյալ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասություններին, որոնց հասցեագրվել է, ապա առաջարկն ամբողջությամբ կամ մասամբ որպես հանրագիր չի արձանագրվում, իսկ այն ներկայացրած անձին պարզաբանվում է, թե որ մարմինն է իրավասու տվյալ հարցով:

Հոդված 9. Հանրագրի քննարկումը մերժելը

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք ամբողջությամբ կամ մասամբ մերժում են հանրագրի քննարկումը, եթե՝

1) անձը ներկայացրել է կրկնակի հանրագիր,

2) հանրագրում նշված հարցը արդեն իսկ ստացել է համապատասխան օրենսդրական կամ այլ կարգավորում,

3) առկա է սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հիմքը,

4) հանրագրով ներկայացված պահանջը ենթակա է լուծման քաղաքացիական, վարչական, քրեական կամ սահմանադրական դատավարության կարգով կամ այդպիսի պահանջի լուծման համար օրենքով նախատեսված է այլ ընթացակարգ կամ

5) հանրագիրը ներկայացվել է օտար լեզվով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Հանրագրի քննարկումը մերժելու հիմքերի առկայության դեպքում իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը հանրագիրը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում հանրագրի քննարկումը ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին՝ հանրագիրը, կից փաստաթղթերը եւ որոշումը ուղարկելով հանրագիրը ներկայացրած անձին:

3. Հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված:

Հոդված 10. Հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետը

1. Հանրագրին պատասխան է ներկայացվում այն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում:

2. Հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետը իրավասու պաշտոնատար անձի կողմից կարող է երկարաձգվել մինչեւ մեկ ամսով՝ այդ մասին ծանուցելով հանրագիրը ներկայացրած անձին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

3. Հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետը կարող է երկարաձգվել, եթե՝

1) առկա է լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտություն կամ

2) նույն հարցի վերաբերյալ առկա է մեկից ավելի հանրագիր:

4. Առանձին դեպքերում, երբ հանրագրում նշված հարցի քննարկման համար ձեւավորվել է առանձին հանձնաժողով կամ այլ աշխատանքային խումբ, ապա հանրագիրը քննարկվում է եւ հանրագրին պատասխան է ներկայացվում հանձնաժողովի կամ այդ խմբի գործունեության ժամկետում, սակայն ոչ ավելի, քան վեց ամսում:

Հողված 11. Հանրագրին պատասխան ներկայացնելը

1. Հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշում չկայացվելու դեպքում դրան սույն օրենքով նախատեսված ժամկետում տրվում է պատշաճ պատասխան:
2. Պատասխանը ստորագրում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասու պաշտոնատար անձը:
3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք հանրագրի պատասխանը ոչ ուշ, քան այն կայացնելուն հաջորդող աշխատանքային օրը ուղարկում են հանրագիրը ներկայացրած անձին:
4. Նույն անձի կամ անձանց կողմից նույն հարցի վերաբերյալ մի քանի հանրագիր ներկայացվելու դեպքում մինչեւ դրա վերաբերյալ պատասխան ներկայացնելը իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը իրավունք ունի միավորել դրանք եւ ներկայացնել մեկ ընդհանուր պատասխան, որն ուղարկվում է բոլոր հասցեատերերին:

Հողված 12. Հրապարակային հանրագրերի ներկայացման եւ քննարկման առանձնահատկությունները

1. Հրապարակային հանրագրերի ներկայացման եւ դրանց պատասխան ներկայացնելու նկատմամբ կիրառվում են սույն օրենքով սահմանված ընդհանուր կանոնները՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:
2. Հրապարակային հանրագիրը ներկայացվում է էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձեւաթուղթը լրացնելու միջոցով:
3. Հրապարակային հանրագիր նախաձեռնած անձը համարվում է գլխավոր նախաձեռնող: Հրապարակային հանրագրին միացած անձինք համարվում են հանրագրի աջակիցներ:
4. Գլխավոր նախաձեռնողը նշում է իր անուն-ազգանունը, հասցեն, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ հանրագրի աջակիցները՝ անուն-ազգանունը եւ էլեկտրոնային փոստի հասցեն: Գլխավոր նախաձեռնողի անունը եւ կապի միջոցի վերաբերյալ տվյալները հրապարակվում են հանրագրի հետ միասին:
5. Հրապարակային հանրագիրը մերժելու հիմքերի բացակայության դեպքում իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը հնգօրյա ժամկետում հանրագիրը հրապարակում է էլեկտրոնային միասնական հարթակում:
6. Հրապարակային հանրագրի գլխավոր նախաձեռնողը գրավոր ձեւով ծանուցվում է հանրագրի հրապարակման, հանրագրի քննարկումը մերժելու որոշման մասին:
7. Անձինք հրապարակային հանրագրին կարող են միանալ հանրագիրը էլեկտրոնային միասնական հարթակում հրապարակվելուց հետո 30-օրյա ժամկետում:
8. Հրապարակային հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետը հաշվարկվում է սույն հոդվածի 7-րդ մասում նախատեսված ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից:

9. Հրապարակային հանրագրերի ներկայացման ձեւաթուղթը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 13. Ազգային ժողով ներկայացված հանրագրերի քննարկման առանձնահատկությունները

1. Ազգային ժողով ներկայացված հանրագրերի քննարկումն իրականացվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

Հոդված 14. Կառավարություն ներկայացված հանրագրերի քննարկման առանձնահատկությունները

1. Կառավարություն ներկայացված հանրագրերը գրանցում, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում նաեւ հրապարակում է վարչապետի աշխատակազմը:

2. Վարչապետի աշխատակազմը որոշում է հանրագրերը վերադարձնելու, հանրագրի քննարկումը մերժելու հետ կապված հարցերը, ինչպես նաեւ ծանուցում է հանրագրի վերաբերյալ ընդունված որոշումների մասին:

3. Եթե բացակայում են հանրագրի քննարկումը մերժելու հիմքերը, ապա հանրագիրը գրանցելուց հետո վարչապետի աշխատակազմն այն վերահասցեագրում է հանրագրում նշված հարցով իրավասու նախարարությանը: Եթե հանրագրում նշված հարցը ենթակա չէ որեւէ նախարարության իրավասությանը, ապա հանրագրի քննարկումն իրականացնում է Կառավարության հանրագրերի հարցերով հանձնաժողովը, որի կազմավորման եւ գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 15. Հանրագրի վերաբերյալ ընդունված որոշումների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողության (անգործության) բողոքարկումը

1. Հանրագիրը վերադարձնելու կամ հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշումները, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմնի ու պաշտոնատար անձի գործողությունը (անգործությունը) ենթակա է բողոքարկման վարչական կամ դատական կարգով:

Հոդված 16. Հանրագրի վերաբերյալ ընդունված որոշումների մասին ծանուցելը, հանրագրի պատասխանն ուղարկելը

1. Սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված որոշումները, ինչպես նաեւ հանրագրի պատասխանը ուղարկվում է փոստով՝ հանձնելու մասին ծանուցմամբ հանրագրի մեջ նշված հասցեով կամ հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ հասցեատիրոջ կողմից էլեկտրոնային կամ հաղորդակցության այլ միջոց ներկայացված լինելու դեպքում՝ այդ միջոցով:

2. Կոլեկտիվ հանրագրի դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաթղթերն ուղարկվում են հանրագրում որպես պատասխանատու նշված անձի

հասցեով, իսկ պատասխանը հրապարակվում է նաեւ էլեկտրոնային միասնական հարթակում:

3. Հրապարակային հանրագրի պատասխանը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը հրապարակում է էլեկտրոնային միասնական հարթակում:

4. Էլեկտրոնային եղանակով ստացված հանրագրի վերաբերյալ փաստաթղթերը հանրագիր ներկայացրած անձին ուղարկվում են նույն եղանակով:

ԳԼՈՒԽ 3.

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ՀՕ-24 օրենքը:

Հոդված 18. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 12-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչեւ համացանցում հասանելի տիրույթում հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծումը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կոլեկտիվ հանրագրերը հրապարակում են իրենց պաշտոնական կայքերում: Տեղական ինքնակառավարման այն մարմինները, որոնք չունեն պաշտոնական կայք, կոլեկտիվ հանրագրերը հրապարակում են համապատասխան մարզպետարանի պաշտոնական կայքում, իսկ մինչեւ 1000 բնակիչ ունեցող համայնքներում կոլեկտիվ հանրագրերը հրապարակվում են նաեւ համայնքի վարչական շենքին հարող տարածքում այդ նպատակի համար հատկացված վայրում:

3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունում է, եւ Կառավարության հանրագրերի հարցերով հանձնաժողովը կազմավորվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԺ վեցերորդ գումարման երկրորդ նստաշրջանի 2017 թվականի դեկտեմբերի 8-ի հերթական նիստում 1-ին ընթերցմամբ ընդունված «Անհատական եւ կոլեկտիվ հանրագրերի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
Կ-105-31.07.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՆՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հասկացություններն են՝

1) հանրագիր՝ Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացվող գրություն կամ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում կամ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական եւ հասարակական կյանքի այլ ոլորտներին վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն.

23) անհատական հանրագիր՝ հանրագիր, որը ներկայացվել է մեկ անձի կողմից.

34) կոլեկտիվ հանրագիր՝ հանրագիր, որը ներկայացվել է երկու եւ ավելի անձանց կողմից միեւնույն հարցով.

45) կրկնակի հանրագիր՝ հանրագիր, որը կրկին ներկայացվել է միեւնույն անձի կողմից միեւնույն հարցով եւ հիմնավորմամբ միեւնույն մարմնին կամ պաշտոնատար անձին, որի վերաբերյալ սույն օրենքով սահմանված կարգով տրվել է պատասխան.

56) էլեկտրոնային եղանակով ներկայացվող հանրագիր՝ «էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ներկայացված հանրագիր.

67) հրապարակային հանրագիր՝ էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձեռով ներկայացվող հանրագիր:

Հոդված 2. Հանրագիր ներկայացնելու սահմանափակումները

1. Հանրագրով անձը չի կարող պահանջել այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք ուղղված են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության դեմ կամ սահմանադրական կարգի բռնի տապալմանը կամ տարածքային ամբողջականության բռնի փոփոխությանը կամ ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն կամ այլ խտրական վերաբերմունք հարուցելուն, բռնություն կամ պատերազմ քարոզելուն, այլ անձանց հիմնական իրավունքների եւ ազատությունների խախտմանը կամ մարդու արժանապատվության նսեմացմանը:

Հոդված 3. Հանրագիր ներկայացրած անձի իրավունքները

1. Հանրագիր ներկայացրած անձն իրավունք ունի՝
 - 1) հանրագրի հետ ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր եւ տեղեկություններ.
 - 2) միանալ կոլեկտիվ հանրագրին.
 - 3) ցանկացած ժամանակ հետ վերցնել իր ներկայացրած հանրագիրը կամ հրաժարվել կոլեկտիվ հանրագրից.
 - 4) ստանալ պատշաճ պատասխան հանրագրի վերաբերյալ.
 - 5) բողոքարկել սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված որոշումները.
 - 6) իրականացնել սույն օրենքով սահմանված այլ իրավունքներ:
2. Հանրագիր ներկայացնելու եւ դրան պատասխան տալու համար պետական տուրք կամ այլ վճար չի գանձվում:

Հոդված 4. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք լիազորված են՝
 - 1) հանրագիրը վերադարձնելու կամ հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում դրա մասին ծանուցել հանրագիր ներկայացրած անձին.
 - 2) էլեկտրոնային եղանակով հրապարակել կոլեկտիվ հանրագիրը.
 - 3) հանրագրում նշված առաջարկությանը հավանություն տալու դեպքում միջոցներ ձեռնարկել դրա կատարման ուղղությամբ.
 - 4) հանրագիր ներկայացնող անձին պարզաբանել հանրագիրը վերադարձնելու կամ հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշումների բողոքարկման կարգը.

5) սույն օրենքով նախատեսված կարգով եւ ժամկետում պատշաճ պատասխանել հանրագիր ներկայացրած անձին:

2. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավունք ունեն անհրաժեշտության դեպքում հանրագրի քննարկումներին ներգրավել մասնագետների:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք ապահովում են հանրագրի լիարժեք, բազմակողմանի եւ օբյեկտիվ քննարկումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 5. Հանրագրի ներկայացման կարգը

1. Հանրագիր ներկայացնելու իրավունք ունի եւ յուրաքանչյուր ոք: ~~Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող ֆիզիկական անձը, անկախ կազմակերպչական ձեւից՝ Սահմանադրության 74-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձը, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաձյուղը, ներկայացուցչությունը, որը հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում:~~

2. Մինչեւ տասնչորս տարեկան անչափահասները հանրագիրը ներկայացնում են օրինական ներկայացուցչի միջոցով:

3. Հանրագիրը ներկայացվում է գրավոր՝ թղթային (առձեռն կամ փոստով) կամ էլեկտրոնային եղանակով:

4. Հանրագիրը ներկայացվում է հայերեն բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Եթե անհատական ընդունելության ժամանակ անձի հնչեցրած առաջարկությունը բովանդակում է սույն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները, եւ անձը ստորագրում է ընդունելության ժամանակ կազմված արձանագրությունը, ապա այդ արձանագրությունը դիտարկվում է որպես հանրագիր եւ քննվում սույն օրենքով սահմանված կարգով:

6. Հանրագիրը կարող է ներկայացվել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով:

7. Հանրագիրը ներկայացվում է այն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, որոնց իրավասություններին վերաբերում են հանրագրով առաջադրված հարցերը:

8. Սահմանադրության 7-րդ գլխով նախատեսված դատական իշխանության մարմիններին հանրագրեր ներկայացվում են նրանց գործունեության կազմակերպման հարցերով, որոնց վերաբերյալ պատասխան ներկայացնելու իրավունք ունեն նաեւ դատական իշխանության մարմինների աշխատակազմերը:

9. Տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված հանրագրերը վերադարձնելու, ինչպես նաև հանրագրի քննարկումը մերժելու հետ կապված հարցերը որոշում է համայնքի աշխատակազմը:

10. Հանրագիրը ենթակա չէ քննարկման, եթե հանրագիր ներկայացրած անձը դիմում է ներկայացրել այն հետ վերցնելու վերաբերյալ:

11. Կոլեկտիվ հանրագիրը ենթակա չէ քննարկման, եթե ներկայացվել է կոլեկտիվ հանրագրից հրաժարվելու վերաբերյալ դիմում՝ կոլեկտիվ հանրագրի բոլոր մասնակիցների համաձայնությամբ: Եթե կոլեկտիվ հանրագիր ներկայացրած անձինք, բացառությամբ մեկի, հրաժարվել են կոլեկտիվ հանրագրից, ապա այն դադարում է համարվել կոլեկտիվ եւ ենթակա է քննարկման որպես անհատական հանրագիր:

12. Անկախ հանրագիրը հետ վերցնելու կամ կոլեկտիվ հանրագրից հրաժարվելու մասին դիմումից՝ հանրագիրը ենթակա է քննարկման, եթե հանրագրի քննարկումն էական նշանակություն ունի հանրային շահերի պաշտպանության տեսանկյունից:

13. Հանրագիրը հետ վերցնելու կամ կոլեկտիվ հանրագրից հրաժարվելու մասին դիմումը ներկայացվում է գրավոր:

Հոդված 6. Հանրագրի բովանդակությունը

1. Հանրագիրը պետք է բովանդակի հետևյալ տեղեկությունները՝

1) «Հանրագիր» վերտառությունը.

2) ֆիզիկական անձի դեպքում՝ հանրագիրը ներկայացնող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

3) իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, մշտապես գործող մարմնի գտնվելու վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

4) կոլեկտիվ հանրագրի դեպքում՝ նաև հանրագիր ներկայացրած այն պատասխանատու անձը, ով լիազորված է հանդես գալ հանրագիրը ներկայացնողների անունից.

5) հանրագիրը ներկայացուցչի միջոցով ներկայացվելու դեպքում՝ նրա անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման կամ գործունեության վայրի հասցեն, կապի միջոցի վերաբերյալ տվյալներ.

6) այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը կամ պաշտոնատար անձի անունը, որին ուղղված է հանրագիրը.

7) հանրագիր ներկայացնող անձի առաջարկը, ~~է-ինչպես նաև~~ հիմնավորումը՝ [ցանկության դեպքում](#), ~~որը պետք է նշում պարունակի փաստական հանգամանքների վերաբերյալ:~~

2. Հանրագիրը ստորագրում է այն ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը: Իրավաբանական անձի կողմից ներկայացված հանրագիրը ստորագրում է կանոնադրությամբ իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող

անձը կամ իրավաբանական անձի կողմից օրենքով սահմանված կարգով լիազորված անձը:

3. Կոլեկտիվ հանրագիրը ստորագրվում է հանրագրին միացած բոլոր անձանց կողմից:

4. Եթե հանրագիրը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա հանրագրին կցվում է ներկայացուցչի լիազորագիրը:

5. Հանրագրին կարող են կցվել ներկայացված առաջարկը հիմնավորող փաստաթղթեր եւ այլ նյութեր:

6. Եթե որպես հանրագիր ներկայացված գրությունը, հաղորդումը կամ առաջարկությունը պարունակում է վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող դիմում կամ բողոք, ապա վարչական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, որին հասցեագրված է հանրագիրը, վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող դիմումը կամ բողոքն առանձնացնում եւ ընթացք է տալիս օրենքով սահմանված կարգով:

Հոդված 7. Հանրագրի գրանցումը եւ հրապարակումը

1. Հանրագիրը ստանալու օրը այն ենթակա է գրանցման այդ նպատակի համար նախատեսված գրանցամատյանում: Գրանցամատյանում նշվում է հանրագրի ներկայացման ամսաթիվը, հանրագրի ներկայացրած անձի անունը, կոլեկտիվ հանրագրի դեպքում՝ որպես պատասխանատու նշված անձի անունը:

2. Անանուն հանրագիրը, ինչպես նաեւ այն հանրագիրը, որում նշված չէ հետադարձ կապի վերաբերյալ որեւէ տեղեկություն, ենթակա չէ գրանցման եւ քննարկման:

3. Կոլեկտիվ հանրագիրը ոչ ուշ, քան ստանալուն հաջորդող երկու օրվա ընթացքում ենթակա է հրապարակման այդ նպատակով ստեղծված համացանցում հասանելի տիրույթում, եթե կոլեկտիվ հանրագրի բոլոր մասնակիցները ներկայացրել են այն հրապարակելու վերաբերյալ իրենց համաձայնությունը:

Հոդված 8. Հանրագիրը վերադարձնելը

1. Եթե հանրագիրը չի համապատասխանում սույն օրենքի 6-րդ հոդվածով հանրագրի բովանդակությանը ներկայացվող պահանջներին, հանրագիր ներկայացրած անձը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահվում դրանք շտկելու անհրաժեշտության մասին: Նշված ժամկետում հանրագիրը սահմանված պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում հանրագիրը ենթակա է վերադարձման:

2. Եթե հանրագիրը կամ դրա մի մասը չի վերաբերում այն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասություններին, որոնց հասցեագրվել է, ապա ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում հանրագիրը ամբողջությամբ կամ մասամբ վերադարձվում է հանրագիրը ներկայացրած անձին՝ պարզաբանելով, թե որ մարմինն է իրավասու տվյալ հարցով:

3. Եթե անհատական ընդունելության արդյունքում ներկայացված բանավոր առաջարկն ամբողջությամբ կամ մասամբ չի վերաբերում տվյալ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասություններին, որոնց հասցեագրվել է, ապա առաջարկն ամբողջությամբ կամ մասամբ որպես հանրագիր չի արձանագրվում, իսկ այն ներկայացրած անձին պարզաբանվում է, թե որ մարմինն է իրավասու տվյալ հարցով:

Հոդված 9. Հանրագրի քննարկումը մերժելը

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք ամբողջությամբ կամ մասամբ մերժում են հանրագրի քննարկումը, եթե՝

1) անձը ներկայացրել է կրկնակի հանրագիր,

2) հանրագրում նշված հարցը արդեն իսկ ստացել է համապատասխան օրենսդրական կամ այլ կարգավորում,

~~3) հանրագիրը ներկայացվել է այն ներկայացնելու իրավունք չունեցող անձի կողմից,~~

34) առկա է սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հիմքը,

45) հանրագրով ներկայացված պահանջը ենթակա է լուծման քաղաքացիական, վարչական, քրեական կամ սահմանադրական դատավարության կարգով կամ այդպիսի պահանջի լուծման համար օրենքով նախատեսված է այլ ընթացակարգ կամ

56) հանրագիրը ներկայացվել է օտար լեզվով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Հանրագրի քննարկումը մերժելու հիմքերի առկայության դեպքում իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը հանրագիրը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում հանրագրի քննարկումը ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին՝ հանրագիրը, կից փաստաթղթերը եւ որոշումը ուղարկելով հանրագիրը ներկայացրած անձին:

3. Հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված:

Հոդված 10. Հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետը

1. Հանրագրին պատասխան է ներկայացվում այն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում:

2. Հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետը իրավասու պաշտոնատար անձի կողմից կարող է երկարաձգվել մինչեւ մեկ ամսով՝ այդ մասին ծանուցելով հանրագիրը ներկայացրած անձին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

3. Հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետը կարող է երկարաձգվել, եթե՝

1) առկա է լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտություն կամ

2) նույն հարցի վերաբերյալ առկա է մեկից ավելի հանրագիր:

4. Առանձին դեպքերում, երբ հանրագրում նշված հարցի քննարկման համար ձեւավորվել է առանձին հանձնաժողով կամ այլ աշխատանքային խումբ, ապա հանրագիրը քննարկվում է եւ հանրագրին պատասխան է ներկայացվում հանձնաժողովի կամ այդ խմբի գործունեության ժամկետում, սակայն ոչ ավելի, քան վեց ամսում:

Հոդված 11. Հանրագրին պատասխան ներկայացնելը

1. Հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշում չկայացվելու դեպքում դրան սույն օրենքով նախատեսված ժամկետում տրվում է պատշաճ պատասխան:

2. Պատասխանը ստորագրում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասու պաշտոնատար անձը:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք հանրագրի պատասխանը ոչ ուշ, քան այն կայացնելուն հաջորդող աշխատանքային օրը ուղարկում են հանրագիրը ներկայացրած անձին:

4. Նույն անձի կամ անձանց կողմից նույն հարցի վերաբերյալ մի քանի հանրագիր ներկայացվելու դեպքում մինչեւ դրա վերաբերյալ պատասխան ներկայացնելը իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը իրավունք ունի միավորել դրանք եւ ներկայացնել մեկ ընդհանուր պատասխան, որն ուղարկվում է բոլոր հասցեատերերին:

Հոդված 12. Հրապարակային հանրագրերի ներկայացման եւ քննարկման առանձնահատկությունները

1. Հրապարակային հանրագրերի ներկայացման եւ դրանց պատասխան ներկայացնելու նկատմամբ կիրառվում են սույն օրենքով սահմանված ընդհանուր կանոնները՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Հրապարակային հանրագիրը ներկայացվում է էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձեւաթուղթը լրացնելու միջոցով:

3. Հրապարակային հանրագիր նախաձեռնած անձը համարվում է գլխավոր նախաձեռնող: Հրապարակային հանրագրին միացած անձինք համարվում են հանրագրի աջակիցներ:

4. Գլխավոր նախաձեռնողը նշում է իր անուն-ազգանունը, հասցեն, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ հանրագրի աջակիցները՝ անուն-ազգանունը եւ էլեկտրոնային փոստի հասցեն: Գլխավոր նախաձեռնողի անունը եւ կապի միջոցի վերաբերյալ տվյալները հրապարակվում են հանրագրի հետ միասին:

5. Հրապարակային հանրագիրը մերժելու հիմքերի բացակայության դեպքում իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը հնգօրյա ժամկետում հանրագիրը հրապարակում է էլեկտրոնային միասնական հարթակում:

6. Հրապարակային հանրագրի գլխավոր նախաձեռնողը գրավոր ձեւով ծանուցվում է հանրագրի հրապարակման, հանրագրի քննարկումը մերժելու որոշման մասին:

7. Անձինք հրապարակային հանրագրին կարող են միանալ հանրագիրը էլեկտրոնային միասնական հարթակում հրապարակվելուց հետո 30-օրյա ժամկետում:

8. Հրապարակային հանրագրին պատասխան ներկայացնելու ժամկետը հաշվարկվում է սույն հոդվածի 7-րդ մասում նախատեսված ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից:

9. Հրապարակային հանրագրերի ներկայացման ձեւաթուղթը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 13. Ազգային ժողով ներկայացված հանրագրերի քննարկման առանձնահատկությունները

1. Ազգային ժողով ներկայացված հանրագրերի քննարկումն իրականացվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

Հոդված 14. Կառավարություն ներկայացված հանրագրերի քննարկման առանձնահատկությունները

1. Կառավարություն ներկայացված հանրագրերը գրանցում, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում նաեւ հրապարակում է վարչապետի աշխատակազմը:

2. Վարչապետի աշխատակազմը որոշում է հանրագրերը վերադարձնելու, հանրագրի քննարկումը մերժելու հետ կապված հարցերը, ինչպես նաեւ ծանուցում է հանրագրի վերաբերյալ ընդունված որոշումների մասին:

3. Եթե բացակայում են հանրագրի քննարկումը մերժելու հիմքերը, ապա հանրագիրը գրանցելուց հետո վարչապետի աշխատակազմն այն վերահասցեագրում է հանրագրում նշված հարցով իրավասու նախարարությանը: Եթե հանրագրում նշված հարցը ենթակա չէ որեւէ նախարարության իրավասությանը, ապա հանրագրի քննարկումն իրականացնում է Կառավարության հանրագրերի հարցերով հանձնաժողովը, որի կազմավորման եւ գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 15. Հանրագրի վերաբերյալ ընդունված որոշումների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց՝ գործողության (անգործության) բողոքարկումը

1. Հանրագիրը վերադարձնելու կամ հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշումները, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմնի ու պաշտոնատար անձի գործողությունը (անգործությունը) ենթակա է բողոքարկման վարչական կամ դատական կարգով:

Հոդված 16. Հանրագրի վերաբերյալ ընդունված որոշումների մասին ծանուցելը, հանրագրի պատասխանն ուղարկելը

1. Սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված որոշումները, ինչպես նաեւ հանրագրի պատասխանը ուղարկվում է փոստով՝ հանձնելու մասին ծանուցմամբ հանրագրի մեջ նշված հասցեով կամ հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն

հանձնելու կամ հասցեատիրոջ կողմից էլեկտրոնային կամ հաղորդակցության այլ միջոց ներկայացված լինելու դեպքում՝ այդ միջոցով:

2. Կոլեկտիվ հանրագրի դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաթղթերն ուղարկվում են հանրագրում որպես պատասխանատու նշված անձի հասցեով, իսկ պատասխանը հրապարակվում է նաեւ էլեկտրոնային միասնական հարթակում:

3. Հրապարակային հանրագրի պատասխանը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը հրապարակում է էլեկտրոնային միասնական հարթակում:

4. Էլեկտրոնային եղանակով ստացված հանրագրի վերաբերյալ փաստաթղթերը հանրագիր ներկայացրած անձին ուղարկվում են նույն եղանակով:

ԳԼՈՒԽ 3. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ՀՕ-24 օրենքը:

Հոդված 18. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 12-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչեւ համացանցում հասանելի տիրույթում հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծումը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կոլեկտիվ հանրագրերը հրապարակում են իրենց պաշտոնական կայքերում: Տեղական ինքնակառավարման այն մարմինները, որոնք չունեն պաշտոնական կայք, կոլեկտիվ հանրագրերը հրապարակում են համապատասխան մարզպետարանի պաշտոնական կայքում, իսկ մինչեւ 1000 բնակիչ ունեցող համայնքներում կոլեկտիվ հանրագրերը հրապարակվում են նաեւ համայնքի վարչական շենքին հարող տարածքում այդ նպատակի համար հատկացված վայրում:

3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունում է, եւ Կառավարության հանրագրերի հարցերով հանձնաժողովը կազմավորվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հանրագրերի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
«Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուստամ Մախմուդյան	Հոդված 5	1. «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետում «Հանրագիրը ներկայացվում է հայերեն» նախադասությունից հետո ավելացնել «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը, նկատի ունենալով՝ «Լեզվի մասին» խարտիայով և «Լեզվի մասին» ՀՀ օրենքով՝ ազգային փոքրամասնությունների համար նախատեսված բացառությունները:	Ընդունվել է. «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Հանրագիրը ներկայացվում է հայերեն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»: Համապատասխան փոփոխություն է	Ընդունվել է:

				կատարվել նաև նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում բացառելու նման հիմքով հանրագրի մերժումը:	
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արփիինե Հովհաննիսյան	Հոդված 6, 1-ին մաս	1. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հանել հիմնավորում ներկայացնելու պարտականությունը:	Ընդունվել է. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «հանրագիր ներկայացնող անձի առաջարկը, ինչպես նաև հիմնավորումը՝ ցանկության դեպքում»:	Ընդունվել է:
3.	ՀՀ Կառավարություն	Նախագիծ	1. Ընդլայնել հանրագիր ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ համապատասխանեցնելով Սահմանադրության 53-րդ հոդվածին, համաձայն որի յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:	Ընդունվել է. Նախագծի 5-րդ և 9-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		Հոդված 1-ին, 1-ին մաս	2. Վերանայել նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի կետերի համարակալումը:	Ընդունվել է. Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
		Հոդված 6, 1-ին մաս	3. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը «բնակության» բառից հետո լրացնել «կամ հաշվառման» բառերով:	Ընդունվել է. Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
		Հոդված 15	4. Նախագծի 15-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ կերպ. «Հանրագրի վերաբերյալ ընդունված որոշումների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողության (անգործության) բողոքարկումը»:	Ընդունվել է. Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագիծ					
			5. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող հոդված 123.1-ի 1-ին մասի 2-րդ կետը «մասին» բառից հետո լրացնել «իսկ «Հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մերժման հիմքերի	Ընդունվել է. Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			առկայության դեպքում մերժում է հանրագրի քննարկումը» բառերով, իսկ 7-րդ մասում ավելացնել հանրագրի քննարկումը մերժելու մասին որոշումը:		
			6. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող հոդված 123.1-ի 4-րդ մասում սահմանել պատասխանի նախագիծը հանձնաժողովի նախագահի կողմից մշակելու եւ հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու ժամկետ:	Ընդունվել է. Մշտական հանձնաժողովի նախագահի կողմից պատասխանի նախագիծ մշակելու և հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար սահմանվել է մեկ շաբաթյա ժամկետ:	Ընդունվել է:
			7. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող հոդված 123.1-ի 6-րդ մասում «կոլեկտիվ հանրագիրը ներկայացրած անձանց ներկայացուցչին» բառերը փոխարինել «կոլեկտիվ հանրագրում որպես պատասխանատու նշված անձին» բառերով:	Ընդունվել է. Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	Պատգամավոր Հրայր Թովմասյան	123.1-ին հոդվածի վերնագրում	«Ազգային ժողովին ուղղված» բառերը փոխարինել «Ազգային ժողով ներկայացված» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Պատգամավոր Հրայր Թովմասյան	123.1-ին հոդվածի 2- րդ մասի 1-ին կետ	«Երեք» բառը փոխարինել «հինգ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է: